

Ք Ս Ա Ն Վ Ե Ց Ե Ր ՈՐ Դ Տ Ա Ր Ի

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“. Чаша Тифлисъ, Редакция „Mschak“. Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առն օրերից)

Յայտարարությունները ընդունվում է ամեն լուրով.

Յայտարարությունների համար վճարում են խմբագրության բաժնի 2 կոպեկ. Տ է Լ է Ք օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Պ Ի Ր Գ Ր Ի Գ ՈՐ Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Բարի ցանկությունները բաւական չեն. Գերմանական նոր ծրագրերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Որն է գերագոյնը. Նամակ Գանձակի դաւառից. Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրության. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ. Ֆրանսիական միջնորդության անկումը. Նամակ Գերմանիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՍՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՊՈՒՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Գիւղական ճարտարապետութիւնը.

ԲԱՐԻ ՑԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՆԱՎԱՆ ՁԵՆ.

Ժողովրդի մէջ գրեթե տարածելու միտքը, որ մենք մի քանի անգամ արծարծեցինք անցեալներում, համակրութեան արժանացաւ և ուղիղութիւն պատճառեց գրքի կարօտ, ընթերցանութեան ծարաւ մաստայի սրտունի «Մշակի» մէջ տպագրած գաւառական նամակները ցոյց տուին, որ մենք չէինք խօսում գոյութիւն չունեցող մի պահանջի մասին: Ընդհակառակն, մեզ համար շատ միտքարական էր տեսնել, որ նոյն իսկ յետ ընկած, ամենախուլ անկրօններում անգամ կարգաւ, սովորել են ուղիղութիւն: Կայ, ուղիղութիւն, հոգը. կայ պատրաստ ընթերցողներ մի շրջան: Թող այդ շրջանը առ այժմ նոյն իսկ նեղ ու սահմանափակ լինի, թող շատ զիւրերում պակաս լինի զբաղէտ, ընթերցող մարդկանց թիւը: Կայ մի առանձին արգելիչ չէ, երբ, պատրաստ ոչ թերն էլ առ այժմ բաւական են. նրանց կարող է աւելացնել զարօցը, մասնաւոր երբ ժողովրդի պահանջին բարեխղճութեամբ բաւարարութիւն տանք: Ըստ պատուիրակի կան. մտաւոր սնունդ հայթայթելու այս ամենամեծ առիթը պատրաստ է:

Ել ի՞նչ է մնում անել: Այժմ ամեն ինչ կախված է այն շրջաններից, որոնք պիտի

ձեռք առնեն գործը: Կրանցից է պահանջվում աշխատութիւն, նրա թափանցող հոգեւորութիւն: Առանց առաջաւոր մարդկանց, առանց ինտելիգենտ դասակարգի, այս համակրելի գործը, որ մեր երկրի լուսաւորութեան, մեր անհամար խաւար մտքերի և անօգնական խեղճերի համար այնքան մեծ նշանակութիւն ունի, չէ կարող մի քայլ առաջ գնալ: Բայց ի՞նչ ենք տեսնում: Հէնց այդ իսկ շրջաններն էլ կամ բաւականացան բարի ցանկութիւնների յայտնելով, կամ կատարեալ անուշագործութեան մասնեցին հրապարակում դրած հարցը: Խտեղիգենցիան դարձեալ անպարտաճանաչ դանկից: Յետամնացութիւնը, որ այս անգամ էլ երևան եկաւ իբրև մեր ինտելիգենցիայի բնորոշ մի յատկութիւն, ներկայացնում է մեզ մի այսպիսի տեսլիկ տեսարան. նոյն իսկ այսպիսի մի փոքրիկ ու թեթեւ գործի մէջ էլ մեր ժողովուրդը բոլորովին անօգնական է, զրկված սրտացաւ, անկեղծ բարեկամից: Երբ, զիցուք, կարկուտը մի օրում ոչնչացնում է զիւրացու բոլոր ցանքերը, մենք ասում ենք, որ նրան այդ աղէտից կարող էր ազատել ցանքերի ապահովագրութիւնը: Բայց ուրիշ հետեւ ապահովագրութեան գործը մեր երկրում հաստատելու համար հարկաւոր են միջոցներ, կազմակերպութիւն, յայտնի նպատակաւ հանգամանքներ, ուստի մենք դժուար ենք համարում այդ փրկարար միջոցի գործագրութիւնը: Այսպէս են և շատ ուրիշ հարցեր: Բայց մի թէ ժողովրդի զիջը տան էլ կարելի է համարել այդպիսի դժուար գործերից մէկը: Շատ ուղիղութիւն, բոլորովին ուժասպառ պիտի լինի մի ժողովրդի առաջաւոր մասը, եթէ այդպիսի փոքրիկ, բայց համակրելի և շատ օգտակար ձեռնարկութիւնն էլ իր ուժերից վեր համարէ:

Մասնուի պարզն է ցոյց տալ պահանջները, թարգման հանդիսանալ ժողովրդի

կարիքներին, բարձրացնել նրա ձայնը յօգուտ այս կամ այն առաջարկութեան: Մենք այդ պարտքը կատարեցինք: Արդեօք դուք էլ կը կատարէք ձեր պարտքը: Արդեօք խուլ գաւառների սարերում գրքի սպասող զիւրացին կը սասանի մեզանից այն, ինչ նա, մենք և դուք շատ ցանկալի ենք համարում...

ԳԵՐՄԱՆԱՎԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Համագերմանականութեան օրգան «Deutsche Zeitung» լրագիրը յայտարարում է, որ գերմանական Վիլհելմ կայսրի Պալեստինեան ճանապարհորդութեան հետ կապված են շատ կարևոր դէպքեր և գերմանացիները մեծ յոյսեր ունեն այդ ճանապարհորդութեան վրա: Դիչ է, Վիլհելմ կայսրը գնում է Պալեստինա սուրբ տեղերը տեսնելու և իր բարեկամ սուլթանին այցելութիւն անելու համար, բայց և այնպէս, նրա ճանապարհորդութիւնը կուսենայ քաղաքական հետևանքներ: Վերջին տարիները գերմանական շահերը Արևելքում բաւական մեծացան: Փոքր Ասիային Գերմանիայում նայում են, ինչպէս գերմանական զաղթականութեան մի բնական հեղուկ միայն մի զարկի է սպասում, որ գտնի իր ճանապարհը: Եւ այդ զարկը, ինչպէս յոյս ունեն ամենքը, կը լինի կայսրի ճանապարհորդութիւնը: Հարկաւոր չէ, որ գաղթականութեան համար նշանակված նահանգները վարձով վերցնեն թիւրքերից, ինչպէս Չինաստանից վերցնեց Կիսօնաու: Բաւական է թիւրքաց կառավարութեան հետ կապել մի գաղնակցութիւն, որ կը նշանակէ Թիւրքիայում այժմ գոյութիւն ունեցող օրէնքները գաղթականութեան դէմ:

Այս առիթով «Times» լրագիր Վիլհելմի թղթակցը հեռագրում է. «Ֆրանս

սիացիները և նրանց հովանաւորութեան տակ գտնվող քրիստոնեաները բնազդամբ գզում են թէ ինչ մեծ նշանակութիւն ունի գերմանական կայսրի Արևելք գնալը: Ուրիշ մի ելք չը գտնելով, նրանք աշխատում են այնպէս ցոյց տալ թէ անտարբեր են դէպի այդ ճանապարհորդութիւնը և նոյն իսկ ուրախ էլ են: Աւստրիայում էլ համակրանքով են վերաբերվում գերմանական այս նոր շարժման, որովհետև այնտեղ էլ կան շատ գերմանացիներ, որոնք բնակութեան նոր տեղեր են որոնում: Բացի գրանցից, Փոքր Ասիայի գերմանական զաղթականութիւնները շատ կը նպաստեն աւստրիական առևտրին:

Եւրոպական մամուլի մէջ վերջերս մաստիկ տարածված այսպիսի լուրերին պէտք է աւելացնել այն տեղեկութիւնները, որ հայտնում է «НОВОСТИ» լրագրի թղթակցը Կ. Պոլսից: Բերլինում մի շարք ծրագրեր են կազմված Թիւրքիայի ապագայ ապահովութեան մասին: Կ. Պոլսում գտնվող գերմանական օֆիցերները ասում են, որ թիւրքաց զորքերի թիւը պէտք է հասցնել առնուազն 700,000-ի. զրա կէսը բաւական է Բալկանեան ագրութիւններին առաջն առնելու համար. իսկ մնացածը պէտք է միշտ պատրաստ լինի, որ հարկաւոր ժամանակ ազատ գործէ, բայց թէ ո՞ւմ դէմ—զա մասաւոր հասկանալի է, այն է՝ Ռուսաստանի դէմ: Փոքր Ասիայում: Մնում է Սև ծովը. այդտեղ էլ Գերմանիան միտք ունի համաձայնութիւն կայացնել Անգլիայի հետ, որպէս զի անգլիական նուտերը գործեն Սև ծովում: Շատ կարելի է, որ գերմանական զիւրացու շատաբար այսպիսի ծրագրերով ուղղում է միայն հրապուրել թիւրքերին. չէ՞ որ Փոքր-Ասիան խլիւղ համար հարկաւոր է նախ և առաջ Համիդի և նրա շրջապատողների խեղճ առնել:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Գ Ի Ի Ղ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ս Ա Ն Ի Ք (Ժողովրդական բարեբեկ)

Հարսանիքները զիւրերում տեղի են ունենում միմյանից ձեռնադր ընթացքում, որովհետև գաւառներ, ամառը և աշունը զիւրացիների վարուցանքի, քաղի և կարելու միջոցներ են, նրանց կրկնակական ժամանակը, երբ նրանք իրանց կրկնադրական աշխատութիւններից զատ՝ ոչ մի այլ բանի մասին ժամանակ չունեն մտածելու: Ամենքին յայտնի է, որ զիւրացիները իրանց զաւակներին պատկուտ են 12—15 տարեկան հասակում: Վարձատմ ամուսնացնելով իրանց երեխաներին, զիւրացիները երկու պիտակը նրա պատակ ունեն: Նախ որ զիւրերում ի հնուց սովորութիւն կայ «մարտի» (նուէր) հարսանիք անել, որի միջոցին նուէրներ են հաւաքվում հարսանիքաւորներից 100—300 ռուբլի, նայած պարտավորվել նրա թական կարողութեան, իսկ երկրորդ ի նկատի ունեն Տողի հասցովը, որ պէտք է ստանան հողաբաժնական կանոնով աւելացած նա ֆարի (հարսի և որդոց) հողաբաժնի: Բացի այդ, կայ և մի այլ խնդիր, այն է, որ կանոնաւոր հողորդութիւնը պահանջում է աշխատաւորներին մի մեծ խումբ, որը կախված է անշուշտ շատ շուտ ամուսնանալուց: Անշուշտ ամուսնութիւնների վերաբերմամբ շատերը բողբում են զիւրական բանասերներին դէմ, որոնք իբր թէ չը պէտք է այդպիսի պատկան կատարեն: Ինչպէս ցոյց են տալիս մեր հաւաքած տեղեկութիւնները, ճիշդ որ տեղեկներն են առաջինները, որոնք աւելի նպատակում են անշուշտ ամուսնութիւններին զիւրերում, զանազան զիւրութիւններ տալով

երկու ինամիացող կողմերին և օգնելով նրանց մինչև իսկ այն դէպքերում, երբ, օրինակ, նրանց գործը, որ և է արգելադրվ պատճառով կանցնի մինչև կոնսիստորիան, նոյն իսկ սինօդը: Գիւղական այդ ջանասանները, իրանց անձնական շահի տեսակէտից, նոյն իսկ չհասն պատկանելու, հայոց եկեղեցու կանոններին հակառակ, յաճախ հասն են վերածուծ, կեղծելով ինամիացող կողմերի ազգակցական ճիւղագրութիւնը և զանազան խարդախութիւններ մտցնելով իրանց յայտարարութիւններում, որոնց մէջ յաճախ 10 տարեկան անպահանջ աղքատը 15—16 տարեկան են ցոյց տալիս և ընդհակառակն 10—12 տարեկան տղային 18—20 տարեկան յայտարարում... Այդպիսի դէպքերում՝ ում դարդն է կտրել, որ վերկեցայ և քրքրի կոնսիստորիայի կամ սինօդի չափաբերական մասունքներն էր և դուրս բերի ամուսնացողների իսկական տարեքը վկայող դոկումենտներ: Կամ թէ, եթէ որ և է առիթով մէկը ուղեկայ այդ անելու, միթէ կարծում էք կը գտնի այդ չափաբերական մասունքներում իր ցանկացածը.— բաւ լիցի.—որովհետև մեր զիւրական տեղաբնիկները այնքան յիմար չեն եղել, որ իրանց մէջ բոլոր ծովաձկները և մետաձկները մի առ մի դրեն: Կամ թէ ուղիղն ասած՝ նրանց զրածնները յաճախ միկերի բաժին են եղել կամ անյայտ կորել: Ի դեպ, պէտք է շնորհակալ լինել այն հանգամանքից, որ վերջին տարիներ, զիւրերապարտութեան պատճառով, խտուրտեց պահանջվում է բանասաններից՝ կարգին ցուցակագրել թէ ծնվածներն և թէ մեռածներն:

«Մարտի» արած հարսանիքները արդէն յայտնի են: Ամուսնացող տղայի բոլոր ազգականներն ու բարեկամները՝ հարսանիքի հրաւերը ընդունելով, որ լինում է մի խնձոր, կամ մի նուռն կամ թէ մի թաս արագ՝ ընտանիքով հանդերձ ներկայ են լինում հարսանիքին և երբ օր ուսում են, խմում և քեֆ անում, իսկ վերջին

օրը նուէր են անում խրաքանդիւր ընտանիքը 1—5—10 ռուբլի, բացի խաչքաւորից, որը եթէ մի քիչ ունենալ է լինում՝ նուէրում է 20—30 ռ., որի համար հարսանիքի մուսնիկը հրապարակապէս կանչում է՝ «չէն կենայ քաւոր-աղէն, իր աննիկին (իկեացողին) ծաղ քցեց 30 մանթի, չէն կենայ՝ չէ՞ն»։ Այնուհետև աստիճանաբար նուէրում են «աղղ բարեկամները» ինամիները, մօտ ազգականները և այլն, որից զոյանում է վերև յիշված գումարը, մօտ 100—300 ռուբլի: Անշուշտ ամուսնացողների վերաբերմամբ ընթերցողներից շատերը երկի կցկոտը տեղեկութիւն ունեն: Մենք երկար մնալով զիւրերում և շատ մօտ ծանօթ լինելով այդ հանգամանքներին, կարող ենք գոհացում տալ ընթերցողների հետաքրքրութեանը: Մենք մեր աչքով տեսնել ենք, թէ ինչպէս զիւրական նորագոյն անշուշտաւոր երեխաները, երեկոյեան դեռ «թիքէն բերանին» նրկնել է իրանց բուրսու տակին նստած և նրան իր ստեղ և ն և տարել քնացնելով՝ պատկեցնելով իր տեղաշարժում... Կրանցից դէմ թէ ինչ կարելի է եզրակացնել, այդ թողնում ենք ընթերցողներին: Սակայն պարտք ենք համարում աւելացնել, որ զիւրական անշուշտաւոր նորագոյններից շատերը, ոչնչն սեռական կարիք չը զգալով դէպի ամուսնութիւնը, զո՞ են գնում իրանց ծնողների քմախաճովութեան, որոնք այս և այն նպատակով ամուսնութեան ծանր լուծը դնում են իրանց մատակարարների վրին... Չը գտնանալք յիշել նաև այն, որ զիւրական նորագոյնները, այն և կին, անհատական ազատութեան վերաբերմամբ այն աստիճան ճնշված և կաշկանդված են իրանց մեծերի առաջ, որ նրանք իբրև հետ ազատ խօսելու, հրապարակապէս սէր արտայայտելու իրաւունք չունեն: Նրանք, այդ ընտանեկան ստրուկները, ամբողջ ցերեկը իբրև նայում են մատներին ատրանքով, իբրև հասկացնում են՝ աչքի տակով:

Նրանք միմյանից ծածկաբար, հեռու սկեւարայրի և սկեւարի քաղցր, կարող են ազատ կերպով իրար հետ խօսել և ինչպէս ամուսնիներ, սերել և սիրովի միմեանցից: Գիւղական նորագոյնները իրան սկեւարայրի մօտ անկարող են երեսը բաց անել և հայ ուտել, անկարող են մի խօսք արտասանել լսելի ձայնով կամ մի հարցին պատասխանել, թէկուզ իր ամուսնուհ և կամ մի ուրիշին. նրանք ստիպված են, կամ անհրաժեշտ պարտաւոր են մի որ և է փոքր երեխայի (թարգմանի) միջոցով պատասխանել կամ ձեռքով ու ստով հասկացնել իրանց առիթը: Գիւրական նորագոյնը, այդ անպաշտպան էակը, իբրև մի կենդանի մեքենայ, տեղական նախնական սովորութիւնների համաձայն, պարտաւոր է օրն ի բուն աշխատել, չարաբովել, սով վրա ման գալ, պարտաւոր է իր սկեւարայրի և սկեւարի խրաքանդիւր անգամ տուն մտնելու նստած տեղից սով վրա կանգնել, նրանց ծանայութիւն անել, նրանց չորեքը, զիւրականները հանել, սոսնիքը ծանայ ջնացնել և ապա միայն ինքը իրաւունք ունենայ՝ ճրագի լոյսը հանցնելուց յետոյ՝ չորեքը հանել քնելու... Եւ այդպէս, ինքն զիւրական նորագոյնները, որոնք եթէ ուղղում են լաւ լինել իրանց ամուսնիները ծնողներին մօտ, պէտք է երեխաները «մահաբանայի» ձեռք, անիստ և անկեղծ մնան առնուազն 5—6 տարի, հակառակ դէպքում, նրանք անառակ են, լիքը, ուրիշ խօսքով՝ նրանք անախտան հարսներ կը նկատվեն, ենթարկվելով սառն մեծերի բոլոր կողտուրթիւններին...

Գիւղական նորագոյնները մեծ մասամբ տեղի են ունենում շատ անհավ կերպով. կեր ու խուս մի միջոցին չափազանց գործ են անում օդի. զինին համեմատաբար շատ քիչ է խմվում: Օրինակ, քաղաքներում որքան շատ գինի է գործածվում, զիւրերում, ընդհակառակն, կրկնապատիկ և նոյն իսկ եռապատիկ օդի է գործ զբերվում: Հարսանիքի հանդիսականներից շատերը

հարցին, թէ՛ արքան է նա համապատասխան մեր ընտանեկան կեանքի պահանջներին և թէ՛ որքան նա զբաղակալան է՝ ինչպէս գրուած է պ. յո- դուստագիրը: Ով ընդ թէ՛ շատ ծանօթ է մեր գիւղական կեանքին, նրան յայտնի է, թէ՛ ինչ- պէս մի քանի ամուսնութիւններ շնորհիւ, իւր- նամէական կապակցութիւնները զրկուած են մի գիւղում ավորող ժողովրդին նոր ամուսնութիւն մտնելու հնարաւորութիւնից: Եւ մի գիւղում պարզ երկրի տակ մեծացած երկու զոյգերի առաջ խեղդվում է բնական սէրը, որ միակ հիմնաքարն է երջանիկ և բարոյական ամուսնու- թեան: Մեզ ծանօթ են դէպքեր, երբ երկու զոյգերի ամուսնութիւնը խեղդվել է՝ ինամէական չհասութեան պատճառով: Եւ այդ տեսակ երե- ւոյթները եղակի չեն: Ո՛ւմ չէ յայտնի, թէ՛ այդ «ինամէական չհասութեան» շնորհիւ որքան խն- դրքներ են թափվել հողեր ատեանները, քանի անգամ գիւղացին, գութանը և բաշը թողած, կոնսիտորիայի և նրա ատենապետի դռներն է մտնել: Բայց էլի կորական «օրէնքը անլուծելի» է խօսքով յետ են մղվել: Արդե՞ք մեր կոնսիտո- րիաները որ և է գործի համար անքան թուղթ գործածած կը լինին, որքան չհաս ամուսնութեան ինդրի համար, կամ կարող է մի կոնսիտորիա որ և է պատմութեան համար այնքան նիւթ մա- տակարարել, որքան չհաս ամուսնութեան պատ- մութեան համար: Գարեբի ընթացքում դէպքերը հետեւում են դէպքերին, բայց ձևերը անլուծելի են, այն ձևերը, որոնց քաղաքակրթ ժառանգու- թիւնը վաղուց է իր պարանոցից դէն դցել: Գեո- փառք Աստուծոյ, եթէ՛ այդ տեսակ «ձևերը» թա- կարդի մէջ ընկնողը մի հարուստ կամ ազդեցիկ մարդ է, նա դեռ իր ձեռքում ունի ինամէա- կան եօթը ատենանի դռները բանալին, իսկ խեղճ, ազբատ դասը դարերի ընթացքում մնում է հիպոստիված այն կարծիքով, թէ՛ միայն «եօ- թը» ֆլորին, սպիտակ շորին, մեռնի կիւնը, առնի քեհնին:

Թէ՛ ինչ վերջերից է հոսում այս ճշմարտու- թիւնը, դա մեր բժիշկ-ֆիզիոլոգներին աւելի քան ուրիշներին յայտնի պիտի լինի... Եթէ՛ ազ- դակցական ամուսնութեան խնդրում մի շարք ֆիզիոլոգների դիտողութիւնները առաջ կը բե- րեն, մենք ոչինչ չունենք ասելու. իսկ ինչով արդարացնենք այն, որը փշրուած է թէ՛ ֆիզիոլո- գիական և թէ՛ ժողովրդի կենսական պահանջները: Այն բարոյականութիւնը, որի մասին խօսում է «Բժիշկի դրոյցները» հեղինակը և որը դարերի ըն- թացքում մնացել է մեր ժողովրդի մէջ, պարտա- դիր է ոչ միայն դէպի ազգականները և ինա- միները, այլ և դէպի ուրիշները. հայ ժողովրդի այդ յատկութեան պատճառները պէտք է որոնել աւելի լուրջ պատճառների մէջ, թէ՛ չէ՛ դանազան ներշնչումները՝ մեզ ծանօթ կրօնամօլ և մղե- ուանող ազգերին աւելի բարոյական կը դարձ- նէին, քան հայ ժողովրդին,—մի բան, որ սա- կայն իրողութիւն չէ:

Յ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍՏԻՑ

Կ. Պօլիս, մայիսի 14-ին

Կիրիկոյ խնդրին, ուր որ է՝ հին կը մնայ տա- կաւին. Արքանամ եպիսկոպոս կառավարական պաշտօնատուները կը թափառի անպատկառ և անամօթ եղանակաւ: Արդարութեան գործոց նախարարութեան կողմանէ անցեալները դրամա- կան նուէր մը տրուեցաւ այդ եպիսկոպոսին... 250 դրանկան (20 բուբլի): Բ. Կրան կողմէ՛ ճնշում է գործ կը դրուի պատրիարքարանի վրա՝ Պօլսէն հեռացուցելու համար Սի միաբաններէն Միլը- սիչ Վեհապետեան եպիսկոպոսն ու Գանիէլեան Ներսէս վարդապետն, ի հարկէ ասոնք ալ Երու- սաղէմ կը խրկուին՝ եթէ՛ պատրիարքարանը չի յաջողի յետաձգել կառավարութեան այդ պա- հանջը: Միլըսիչ եպիսկոպոս և Ներսէս վարդա- պետ չեն համակերպած կառավարութեան՝ Կիրի- կոյ կաթողիկոսական խնդրին մէջ և այս պատ- ճառաւ անոնց Պօլսոյ մէջ մնալը կառավարու- թեան գործին չի գար: Սուլթանը լաւ բան մը կընէ՝ եթէ՛ պատրիարքէն սկսեալ բոլոր եպիսկո- պոսներն ու վարդապետներն Երուսաղէմ աքսորէ, այն ատեն ամեն խնդիր ինքնին կը լուծուի:

Կրօնական և քաղաքական ժողովներու սաս- մանադարական երկամաս շրջանն աւարտելու վրա է: Ըստ սասմանադրութեան պէտք է նորե- րն ընտրուին: Խնդիր մ'ալ այս է, բաւական ծանր. բայց ի հարկէ սուլթանը պիտի չարտօնէ նորոգ ընտրութիւնն՝ մինչև որ սասմանադրու- թեան վերաջնորդութեան, այն է ջնջման խնդրին իր ուղածին պէս գործարար չի տայ պատրիար- քարանի. հետեւաբար «ցնոր անօրէնութիւն» ընե-

լով՝ վեհապետները տակաւին երկար ատեն կը մնան իրենց պաշտօնին մէջ, ինչպէս Աշքեանի օրով Մարտոս Սիւնի վարչութիւնը: Գաղտնի խորհուրդներ շատ կան ու կը դառնան այս օ- րերս պատրիարքարանի շուրջը. պատրիարքի և Տատեանի միջև այցելութիւններ կը փոխանակ- վին ի ծածու և ի տարածամու: Բաւական տար- նապակց է ազգային վիճակը, տեսնելք ուր պիտի յանդիման գործերը: Առանձ է՝ կրօնը.— ինե- դին մէկը բար մէ՛ նետեր ջրնորին մէջ, բառա- ստուն խեղացիներ չեն կրցած բարը ջրնորէն հա- նելը:—Այս է հիմա մեր ազգին վիճակը:

Կիրիկ

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

«Հանդէս Ամուսնացի» մէջ կարդում ենք. «Տարագիր» մէջ (թիւ 15) կը կարդանք թէ՛ «Պր. Եսայի» գրքի մասին վեճի և Վիեննայի Ring (?) թատրոնի ձեռք և ամենակատարեցողութեամբ վերջին յարմարութիւններով, կրկնակի շարժա- կան ընտրվ մի շքեղ թատրոն կառուցանել Բազ- ևուստ: Այս գեղեցիկ լուսն այնպիսի սխալ տե- դեղեկութիւններով կը տրուի, որ «Տարագիր» ծա- մանակէ մ'ի վեր յառաջ բերած ինքնատեղծ անուններով պատկերներուն կը նմանի: Ring թատրոնը՝ 1881-ին այրած է և հիմա չը կայ. այրած Ring թատրոնը «Բելարիայում» է, այլ երբեմն էր Schottentring-ի վրայ... «Տարագիր» ներկայացումներ չեն (այսինքն՝ չէին) տրուած, այլ վոլ'վիլներ և...: «Բելարիայում» կառուցուած է «Deutsches Volkstheater», իսկ Վիեննայի ա- մենալայն փողոցի վրայ, և նրա ֆասադը բար- ռովին բաց» թատրոնն է Hofburgtheater-ը, և այս վերջինս «Ֆօլեյ» է (foyer, կը կարդա- ցուի ամեն ինչուս «Ֆօլեյ» մտնողը էլ չի կամենում այնտեղից դուրս գալ, այնքան սքան- յելի և դիւթական են»: Լուր մը տալու համար երբ ասորքը թատրոններ իրենց տեղէն փոխա- դրել և երբեք յատկութիւններն ի մի ձուլել՝ շատ կը նմանի.— ինչպէս քիչ մը վերը յիշեցինք — «Տարագիր» «Տարագիր» պատկերներուն: Հասա- բակ դրեալ մը՝ մայած կըլիջ մը, որուն վրայ 83 (=1883) տարեթիւը որոշ կը կարգադրուի, կը ներկայացուի իր «Ֆօլեյ»-ը. ծովկերեայ մարտիկները, գոնէ լճի մէջ լողացող կարասիներն ու տաղերն ալաւտէին «Տարագիր» պատկերը — Հօսթը: Ամեն թուի մէջ հատ մը կընայ գոտուի պայտիսի «Տարագիր» պատկերներին... Չինաս- տանի ամուսնացները կը ներկայացնեն հին մա- յած կըլիջ մը, պատկերին տակ piquant անուն մը կը հնարուի «Տարագիր» վարդապետներին ին- կուլիցիա: Հրչէջ գործը մը՝ հրգէ՛ մարկու- կիթթայ (կառքին վրայ դրոյներն ու այս առթիւ գործածուած ծածրապահ աղաւարտներն յայտնի կը տեսնուին, տես թիւ 16), և սակայն «Ֆէյ» ի նիւ-Նօրքը անտառը: Տրաշտը—բանաստեղծա- կան անուսում կը միտրուի այս հրչէջը...: Մե- հնարին է ամեն պատկերներն յիշել: «Ֆօլեյ»- րորդ դարու դրան կանգնած» խմբադրութեան մը այսպիսի արարքներուն վրայ խորհրդածը կը թողուք իւրաքանչիւր ընթերցողին»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
ԱՍԵՐԻԿՈ-ՍԱՇՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ՆԻՒ-ՆՈՐԿ, 8 յունիսի: Հեռագիրը հաղորդում է, որ Շաֆտերի զօրաբանակը հասաւ Կուբայի ափերին: Ա. ի իջնելը տեղի կունենայ այսօր:

ԲԱՌՈՒՄ, 9 յունիսի: Յունիսի 8-ին «Նախի- մօլ» նաւով Բաթում բերվեց՝ Տրապիզոն ձեռ- բակալով: Կիրիկիի գանձարանի գանձապահ Փօրժօլեանի, որը գողացել է աւելի քան 70,000 բուբլի և մ.աղբված էր փակելը Կ. Պօլս: ԲՕՍՏՈՎ-ԿՈՆԻ ՎՐԱ, 9 յունիսի: Յունիսի 8-ին Բոստովի վրայով ուղևորվեց դէպի Նօլօ- բոսիսիկ Մեծ Իլիան Ալեքսանդր Միխայովիչ ամուսնու և երեխաների հետ:

ՊԱՐԻՋ, 9 յունիսի: Պատգամաւորների ժողովի կորիզներում ասում են, որ Սարիէն յանձն առաւ կազմակերպել միջնորդութիւն շնորհիւ այն համաձայնութեան, որ կայացրեց 1898 թիւ բիւլետէնային յանձնաժողովի նախագահ Գէլօբերի հետ, որը կը մտնի ապագայ միջնորդութեան մէջ և կը ներկայացնի մի ծրագիր հարկերի վերակազմութեան մասին, հիմք ընդունելով ե- կամուտի նշանները, ինչպէս օրինակ, բնակա- բանի վարձը, ծառաների թիւը և այլն:

Թարագիր՝ ԱԼԷՔՍԱՆԳՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչ՝ ԱՆԻՐԷԼԱՍ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բեսարաբիայի ԲԵԼՅ քաղաքի գիւղերից մի- նում, մի հայ կալուածատիրոջ երկու երեխանե-

րին գիւնազրայի առաջին և երկրորդ դասարան- ները պարտաստելու համար՝ հարկաւոր է մի

ՀԱՅ ՎԱՐՇՈՒՅԻ

որը լաւ գիտենայ հայերէնի հետ՝ ուսուցիչը մ ա թ ու ր առողանութեամբ, ֆրանսերէնն ու գերմաներէնը ը ո շ ո թ ո վ ի ն վ ա թ ժ, ու դաշ- նամուրի վրա էլ կարողանայ նուազից գոնէ չա- փաւոր: Պայմանները շատ աջող են. բնակարան, ճաշ և լաւ ուտիկ. առնուազն մի տարի մնալու պատասխանաւորութեամբ: Պայմանները մանրա- մասնութիւնների մասին դիմել կամ Դ. ՕՐԴԵՎԵՅ (Bessarabia), священику Затихянцу և կամ Դ. ԲՅԼԵ- ՄԻ (Bessarabia), Апопу Сергѣевичу Поповичу вочт. Еленовка. 7—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԿԱՆՈՑ Բ. ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆԻ

(Կուրիա, Վօրոնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից: ԱՌԱՌՈՏԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆ—11—12 ժ. վիրաբու- ժութեան, վերնբրակայ (սիֆիլիս) և միլատեա. 5.
Կ. Մ. ՉԻՎՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներարային 5.
ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ—10¹/₂—11¹/₂ ժ.: կանանց և երեխայոց 5., ծաղիկ պատուա- տուում:
Չ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11¹/₂—12 ժ. կա- նանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1¹/₂ ժ. ներքին և երեխայոց 5.
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1¹/₂—2¹/₂ ժ. ներքին, և մի- դատեական 5. ակնայի, կոկորդի և քթի 5.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Վ. Մ. ՄԱՍՎԻԼԱՋԷ—6—7 ժ. ներքին և երե- խայոց 5. ներարային և մորթի 5.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆ—6¹/₂—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցում քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է ա- նում մէկը, խիլ, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերահսկումը՝ ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆ 128—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆ

ՖԻԶԻԿՈ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԲՆՏԳԻՏ-ՈՒՍՆՈՂ
որոնում է դասեր: Համաձայն է և ուրիշ տեղ զնալ: Հասցէն. Սօլոյակ, Ստարո-Նես- տիտուսկայա փողոց, առանձէրանի, № 7, Մատրոսովիչին: 4—10

ԲԺՇԿԱԳԵՏ
ՋԱԽԱՐԵԻԳԵԱՆ
ամառը ընդունում է հիւանդներ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՔԱՅԻՆ ՋԻՐՈՒՄ.
Հասցէն՝ Պետերգօրսկ. տ. Սեղօն- նի խնուօր: 6—12

Լ յ յ ս տ ե ս ա լ
ԻՍՏՆԿ ԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
նոր աշխատութիւնը
ՋԳՆՏՄՈՒՆԳՆԵՐԻ ԸՂԽՈՐԷ
(«Էլքը Հայաստանի մասին»)
ԳԻՆԸ 30 ԿՈՊԷԿ 3—3

Լ յ յ ս տ ե ս ա լ
ԼԵՒՆ ԽԱՆ-ԱՂԱՆԻ
Փիլոսոփայական
գործիքներ և մեքենաներ
Բացարարական բառարանով և 250 նկարով:
Հրատարակութիւն Քիֆիլիսի հայոց Հրա- տարակչական ընկերութեան:
ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ.
Գրիչ՝ ТИФЛИСЬ Общество изданія армянск. книгъ, Баронская, 12. 20—40

«Կոմիտասեան դրամատիկական ընկերու- թիւն»
Գրիչ գործաւանդի
Հրատարակութեամբ ըլլա տեսաւ.
«ԱՂՔԵՆԵՐ, ԳՆԵԻԼ ՄԱՐԿՈՐԵՐ ԳԻՐԶԸ ԵՒ ՍՈՒՐԻ ԾՆԵՆԵՆ ԴՐՈՒՄԻՆԻՆԻ ԵՐԿՆ»
3 պատկերներով. գինն է 7 կ.: Գումարով գը- նողներին 20% զեղչ է անվում:
2—2

ԵՐՈՒՄԱԼ ՀԱՄԱՐՄԱՐ
Ս ա մ ս ո ն Ս տ ե փ ա ն ե ս ն
ՅՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԸՆԴՈՒՄԻՆ Ե ԳՆՏԱՐՆԵԱՆ ԳՈՐԾԻ
ԲԱԳՈՒ, հիւանդ «Գրանտ-Օտէր» (5. շ. ե.) 4—10

Ջ զ ու շ ա յ ր է ք կ ե դ ծ ու մ ն եր ի ց
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՈՐՆՈ-ՏԻՄՈՒԼԵԱՆ ՍԱՊՈՆ
Գ. Ֆ. Ի Ի Ր Գ Է Ն Ս
Ոչնչայնում է պեղները, սեւթիւնը, դե- ղին բծերը, սրտիկները և պտուկները և ներգործում է աւելորդ քրտնեղու դէմ: Խոր- նուրդ է արվում ձեռք բերել, որպէս տու- լէտային անուշադուս սպային, բարձր արժա- նաւորութեան:
ՈՍՎԷ ՄԵՎՈՒ, 1893 թիւ համար:
Կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.:
Մակնում է բոլոր ամենայն դեղատրոմա- կան մագալիններում և դեղատներում:
Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէտի մօտ Մոսկովայում: Իէպօ, Քիֆիլիսում, Արմոնովի մօտ, դեղա- գործական ապրանքների աւտորի կովկասեան ընկերութեան մէջ, Մուրիսովի և Գրիվիակի, պ.պ. Պոպովների և Արիստակովի մօտ: (10, 25) 10—24

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
ԼԵՈ
Մ Է Լ Ի Ք Ի Ա Ղ Ջ Ի Կ Ը
(Պատմական վէպ 753 երես):
Գինը 1 ըուբլի 30 կոպէկ: Իմել հեղինակին. ТИФЛИСЬ, редакция „Мусах“.
2—10

Թոյնատրված բժշկական վարչութիւնից
„ДЕЛИСЬ“ („DÉLICE“)
Գիւտ Գիւնական Նիւիլերի Արդիւնաբերական Ընկերութեան Պարիզում (Compagnie Industrielle de produits chimiques, Paris): Արդիւական բոյսերի բաղադրութիւն ֆրանսիական դեղին և կանաչ- իլիկօրներ տանը պատրաստելու համար. շ ա թ ո թ և ո ղ և բ է ն է դ ի կ ա ի ն համով, հոտով և գոյնով ու- չինչով պակաս չեն իսկական ֆրանսիական լիկօրներից: «Էլիս» բոյսերից պատրաստած լիկօ- րի շիշը նոստում է 75-ից մինչև 90 կ., այն ինչ արտասահմանեան գործարանական լիկօրը արժէ 5-ից մինչև 7 ըուբլի: Մէկ տուփ «Էլիս» գինը առանց ձանապարհածախսի արժէ 55 կ., իսկ տաս տուփից ոչ պակաս պատրիզները ձանապարհածախս չեն վճարում և ուղարկվում է վերա- դիր վճարով: Պատրաստելու եղանակը գտնվում է իւրաքանչիւր տուփի մէջ:
Պատկերները պէտք է դիմել Վարշաւա, улца Св. Георгія № 28, X. Каменомост- еромъ.
«Էլիս» կարելի է գտնել նոյնպէս բոլոր լաւ դեղատներում և դաստրօնովական մագալին- ներում:
Նրանք, որոնք ցանկանում են ծախելու բացառական իրաւունք ձեռք բերել որ և իցէ շըր- ջանում, թող բարեհաճան դիմել Վարշաւայի հասցէով:
(5.) 9—10